

EDN: CEUMJV

Մերօրյա դժվարին կացության մեջ հայտնված Հայաստանում հասարակության ներքին երկպառակությունները շարունակվում են: Դրանցից էլ մեր հակառակորդները վարպետորեն օգտվում են: Իսկ թե որտեղից են սնվում դարեր շարունակվող մեր թուլության հիմնական այդ պատճառի արմատները, կփորձենք ներկայացնել այս հոդվածի սահմաններում: Հայտնի ճշմարտություն է՝ երբ «ես»-ը չի համակերպվում ու տեղավորվում «մենք»-ում, դառնում է չարդարացված եսասիրություն: Իսկ երբ այդ «ես»-ը մոլորվում է իր իսկ հյուսած ոստայնում, մնում է մենակ և անօգնական: Նույնը պետությունների և ժողովուրդների դեպքում է: Ցավալի է, սակայն այսօր Հայաստանի Հանրապետությունն էլ տարածաշրջանում հստակ արժեքային դիրքավորում չունի: Այնինչ մեր հարևանների դեպքում դա ավելի քան հստակ է: Թուրքիան օրինակ, հավակնում է դառնալ տարածաշրջանի ռազմական առաջատարը և եվրասիական տրանզիտային տարբեր հոսքերի հիմնական կենտրոնը: Ադրբեջանը հանդես է գալիս որպես Էներգետիկ ռեսուրսների խոշոր արտահանող, իսկ հարևան Վրաստանը՝ որպես տրանզիտային միջանցք և զբոսաշրջային կենտրոն: Իսկ Հայաստանն իր «լողացող» դիրքորոշման արդյունքում ոչ միայն տարածաշրջանային որևէ էական խնդիր չի լուծում, այլև տարածաշրջանային գործընթացներից որևէ շոշափելի առավելություն չի ստանում, որն էլ իր հերթին բացասաբար է ազդում նրա պաշտպանունակության և տնտեսական զարգացման վրա:

Այդ ամենը հետևանք է այն իրողության, որ սրանից 100 տարի առաջ Թուրքիան և Ադրբեջանը կարողանալով խել Հայաստանի տարածքների գզալի մասը, նրան այնպիսի քարտեզ են պարտադրել, որն էապես սահմանափակում է նրա պաշտպանական, տրանզիտային ու ռեսուրսային հնարավորությունները և հարկադրել են գոյատևել չափազանց անբարենպաստ պայմաններում: Եթե այս իրավիճակն առանց արմատական փոփոխությունների այսօր էլ շարունակվի, ապա մեր անվտանգային մարտահրավերները ոչ միայն չեն լուծվի, այլև կշարունակվեն սրվել և կսպառնան անկախ պետության գոյությանը, ինչպես 1920 թ. դա եղավ:

Ամենացավալին այն է, որ հարյուր տարի անց էլ հայ քաղաքական միտքը դեռ հստակ պատասխան չի տվել այն հարցին, թե ինչպես է պետք դուրս գալ այս աշխարհաքաղաքական և արժեքային փակուղուց: Այդ պատճառով էլ փնտրտուքները շարունակվում են և տարափեղկում հայությանը: Իշխող վարչակարգի և նրա տարբեր սատելիտների հիմնական թեզն այսօր այն է, որ Հայաստանը նեոթուրանական նախագծին դիմագրավելու բավարար ռեսուրս չունի, ուստի իր գոյությունն ապահովել նրա միակ հեռանկարը հավաքական Արևմուտքի հովանավորությամբ այդ նախագծի մաս դառնալն է: Հենց այս տրամաբանության մեջ են տեղավորվում վերջինիս բարեհաճությունը ստանալու ակնկալիքով նրա անվերջանալի զիջումները թուրք-ադրբեջանական տանդեմին: Ընդդիմության թեզն էլ այն է, որ ընդհակառակը, պետք է հենվել Ռուսաստանի և մասամբ Իրանի վրա, մաս դառնալ ձևավորվող Հյուսիս-Հարավ առանցքին և հակազդել այդ նեոթուրանական ծրագրին:

Երկու մոտեցումներն էլ, սակայն, անվտանգային լիարժեք լուծում չեն ապահովում: Առաջինի դեպքում, որևէ երաշխիք չկա, որ թուրք-ադրբեջանական տանդեմը, դառնալով Հայաստանի փաստացի սուվերենը, երկարաժամկետ հեռանկարում կհանդուրժի նրա գոյությունը: Եթե նույնիսկ Արևմուտքի ճնշման ներքո հիմա համաձայնվի էլ խաղաղության պայմանագիր կնքել, նրա հաջորդ գործողությունը լինելու է Արցախի հայաթափումը, իսկ դրանից հետո հերթը հասնելու է Սյունիքին, Վայոց ձորին և Հայաստանի այլ, համեմատաբար նոսր բնակեցված արևելյան տարածքներին, որոնց նկատմամբ հավակնություններն Ադրբեջանը բնավ չի էլ թաքցնում: Երկրորդ տարբերակը, հարկավ, մեզ համար արտաքուստ ավելի բարենպաստ է, սակայն առանցքային բացն այստեղ այն է, որ թե՛ Ռուսաստանը, թե՛ Իրանն այսօր Արևմուտքի հետ ունեն լրջագույն խնդիրներ: Դա արագ սպառում է նրանց ռեսուրսները և նույնիսկ վտանգի տակ դնում այդ երկրներից յուրաքանչյուրում իշխող վարչակարգերի կայունությունը, որի հետևանքով էլ՝ մեր տարածաշրջանում հիմնարար դերակատարություն պահպանելու նրանց կարողությունը: Դրա առաջին նախանշանները մենք տեսանք 2020 թ. Արցախյան պատերազմի ժամանակ, երբ ռուս-իրանական տանդեմը փաստացի զիջեց իր դիրքերը թուրք-ադրբեջանականին և արդյունքում ընդամենը ժամանակավոր դադար

շահելու հեռանակարով գոհաբերեց նաև հայության կենսական շահերը: Նույնը տեսնում ենք նաև այս օրերին, երբ Արցախը գտնվում է շրջափակման մեջ:

Հայ քաղաքական մտքում դեռևս սաղմնային վիճակում առկա է նաև երրորդ ուղղությունը: Դրա հիմքում այն գաղափարն է, որ որպես աշխարհասփյուռ ազգ, որը որոշակի ռեսուրսներ և ազդեցություն ունի տարբեր երկրներում, հայությունը պետք է հավակնի գլոբալ դերակատարության և փորձի ողջ աշխարհի համար դառնալ արժեքավոր: Դա Հայաստանին կօգնի հաղթահարել աշխարհագրական դիրքով պայմանավորված սահմանափակումները: Այս գաղափարի հիմնական ջատագովներից Վազգեն Մանուկյանն իր «Անհաղթահարելի ցանկություն» հոդվածում (<https://168.am/2022/12/07/1807186.html>) առաջ է քաշել այն թեզը, որ հայերը պետք է հավակնեն աշխարհի մասշտաբով մեծ խնդիրներ լուծելու: Այդ դեպքում նրանք կվերականգնեն իրենց երբեմնի կարևորությունը, ինչպես եղել է նախկինում, երբ Հնդկաստանից Եվրոպա տարանցիկ առևտուրը նրանց ձեռքում էր գտնվում: Սա գրավիչ գաղափար է, սակայն պահանջում է պատասխանել առնվազն երկու արմատական հարցի՝ ա) կոնկրետ ինչ իրատեսական դերակատարության մասին կարող է խոսք գնալ, բ) մինչև այդ դերակատարությանը հասնելը, ինչպես խուսանավել մեզ շրջապատող գիշատիչների միջև և թույլ չտալ պետության կորուստը: Հետո էլ Հայաստանից դուրս ապրող հայությունը հայազգի բնակչություն է և ոչ թե ազգ կամ ժողովուրդ: Իսկ բնակչությունը ժողովուրդ է դառնում է երբ համախմբվում է որևէ գաղափարի շուրջ: Ժողովուրդն էլ երբ համախմբվում է ազգային շահի հիմքով, դառնում է ազգ: Բնակչությունը, ժողովուրդը և ազգը նույն նյութի տարբեր վիճակներն են, ինչպես ջրի գոլորշի, հեղուկ և սառույց վիճակները: Ջրի դեպքում դա ավելի պարզ է և տեսանելի, իսկ հայության դեպքում շատ ավելի դժվար է: Քանի որ դա աչքով չես տեսնի, այլ միայն մտքով: Հետևաբար հարկավոր է հստակ ու հասկանալի շարադրված ազգային գաղափարախոսություն, որը համայն հայությունը ազգի կվերածի, ինչպես դա եղել է օրինակ Իսրայելի դեպքում:

Այս առիթով ուզում եմ դիմել սոցցանցերում գրեթե ամեն օր սեփական կարծիքը բլոգին պարտադրող օգտատերերին: Վիրտուալ Ռեմբոներ ջան, մի քիչ հանգիստ տվալով և հասկացեք վերջապես, կայսրություններն այլ ժողովուրդներին կյանելու համար նախ պայքարում են նրանց ազգային գաղափարների և մյուս արժեքների դեմ, հետո նրանց հավատացնում են, թե ազգային արժեքները անկարևոր ու հնացած են և արդիական են իրենց արժեքները: Այսինքն, երբ քարոզում են ազգային արժեքների մոռացում, իրականում քարոզում են իրենց արժեքների տարածումը: Իսկ ոչ ազգային արժեքները հենց կայսրությունների արժեքներն են, որոնք և հռչակվում են առաջադեմ ու օրինակելի: Պետք է ընդունել, որ ազգերը վերանում են նաև իրենց արժեքները կորցնելով և ուրիշների արժեքներն ընդունելով: Մեր պարագայում, խիստ վտանգավոր է ազգային ինքնագիտակցության, ազգային արժեքների դեմ պայքարը, մանավանդ որ արմատում հարևանները հակառակն են անում և անհիմն բարձրացնում չունեցած ազգային նշանոցը: Այնպես որ, պոպուլիստ, դեմագոգ, ազգայինը հաշվի չառնող, անսկզբունք, ոչ մի իզմի չդավանող քաղաքական ուժը երբ փորձում է մեկին կուռք դարձնել, կուրորեն հավատացնել այդ մեկին, հարկավոր է զգույշ լինել, իրատես, լսել տարբեր քաղաքական տեսակետներ, հաշվի առնել աշխարհաքաղաքական առկա գործընթացները, գերտերությունների իրական նպատակները, ՀՀ-ի պոտենցիալը, իրական ուժը և ոչ թե ցանկություններով առաջնորդվելով երկիրն ու ժողովրդին տանել արկածախնդրության և վերջակետ դնել մեր ինքնությանը:

Փոխանակ այդ սկզբունքներին դավանելու, անկախությունից ի վեր մեր բոլոր կառավարությունների քաղաքական գծից բացակայեց պետական շահի բացարձակ գերակայության գաղափարը: Այնինչ, պետական շահերի սպասարկման նպատակապահ գործընթացում, կառավարությունները չպիտի երկմտեին և հանուն դրանց պաշտպանության պիտի անեին ամեն ինչ: Դա չեղավ, քանի որ այսօրվա իշխանությունների հոգեհայր Լևոն Տեր Պետրոսյանն ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա համարելով՝ երկիրը գիտակցաբար դրեց այնպիսի խաթար հունի մեջ, որը շարունակվեց անկախության բոլոր տարիներին և որին այսօր մենք ականատես ենք: Քոչարյանն այդ ընթացքը փոխելու հնարավորություն ուներ, բայց չկարողացավ կամ չցանկացավ օգտագործել այն: Իսկ Մերժ Սարգսյանը ոչ միայն չցանկացավ ընթացքը փոխել, այլև ավելի հաստատուն գնաց այդ ուղով՝ երկիրը մղելով ներկա տխուր իրականություն:

Այսօր, երբ մեր երկիրն ու պետականությունը վտանգված են, խելացի առաջնորդ անհատների դերակատարությունը դառնում է ճակատագրական: Երկիր կառուցելու համար հարկավոր են պետական և ոչ թե քաղաքական գործիչներ: Քանզի պետական գործիչներն իրենց ծրագրերն իրականացնում են գալիք մի քանի սերդի համար, իսկ քաղաքական գործիչները՝ ընտրություններում հաղթելու: Իսկ քանի որ մեզանում գերակշռում են քաղաքական գործիչները, առանց հեղաշրջման կամ արտաքին հարձակման պետությունը կարող է փլուզվել հենց ներսից: Այսինքն, թշնամին սեփական ես-ի տարածքում է և ոչ այլ տեղում: Այս առումով հետաքրքիր է Իոսիֆ Բրոս Տիտոյի

(Հարավսլավիայի նախագահ 1953-1980 թթ.) պետությունները քանդելու ձևերի մասին տեսությունը, որում նա դիտարկում էր պետություններ կործանողների չորս խմբեր. ա) տիրակալներ, ովքեր լիովին հավատում են ժողովրդավարությանը և ընտրում լավագույններին, բայց միայն իրենց ընտանիքից, կուսակցական ու ընկերական միջավայրերից, բ) սահմանափակ մտածողներ, ովքեր արժանավոր մասնագետներին երկրի կառավարմանը մասնակցելու հնարավորություն չեն տալիս: Դա էլ հիասթափեցնում է նրանց և նրանք հրաժարվում են մասնագիտությունից, իսկ երբեմն էլ որոշում հեռանալ երկրից, գ) աթոռապաշտներ, ովքեր պնդում են, որ մեռնելուց հետո էլ իրենց թաղեն իրենց աթոռով: Այս տեսակն աթոռ ասելով՝ պատկերացնում է միայն իրենց և՛ հակառակը: Մրանք ևս երիտասարդ մասնագետներին դրսևորման հնարավորություն չեն ընձեռում, դ) հնագանդություն նախընտրողներ, ովքեր հոգուտ իրենց ես-ին քծնողների՝ սահմանափակում են նախաձեռնող և արհեստավարժ կադրերի առաջխաղացումը: Իսկ հզոր պետություն կառուցելու համար Տիտոն առաջարկում էր հիմնավորապես բարեփոխել ընտրական համակարգը: Որը միանգամայն արդիական է նաև Հայաստանի դեպքում, քանի որ այստեղ անցկացվող խորհրդարանական ու համայնքային ընտրություններն էլ լուրջ կատարելագործման կարիք ունեն:

Վերափոխումներն, իհարկե, անհրաժեշտ են և անխուսափելի, բայց ներկա պահին մեզ համար ավել կարևորը նախ՝ ինքնափոխվելն է, զգաստ ու սթափ մտածողությունը, համախմբվածությունը, միմյանց ունկնդիր լինելու կարողությունը և ամենակարևորը՝ իրար սիրելու ունակություն դրսևորելը...

Сдана / Հանձնվել է՝ 03.05.2023
Рецензирована / Գրախոսվել է՝ 10.05.2023
Принята / Ընդունվել է՝ 17.05.2023